

հեռատեսու եւ դիւրամատոյց հովուապետ մը, գտնելու համար յաջող ելք այն ամպա-  
մած հորիզոնին տակ, ուր մըրիկը եւ արհաւիրք կ'իշխէին:

Պէտք էր յառաջադէմ ընթանալ, քայց առանց ոստումի: Պէտք էր ճնշել  
դարերու զեղծումները, քայց յարգելով հինը, ազգայինը, աւանդականն եւ հաշտ  
անոնց հետ կոխել նոր ուղին: Յաջողութիւնն որսալու համար հարկաւոր էր սանձել  
սեպհական ձգտումներու թռիչքը: Եւ եթէ քարեձուլութիւնը հասարակութեան քարե-  
լաւումը կը դիտէր, հարկ էր որ կերպն ալ ժողովրդեան հեշտընկալ եւ փարելի  
ըլլար: Թէրգեան համարեցաւ թէ կարելի է ճոխութեամբ հարթել ամէն դժուա-  
րութիւն: Սուրբ էր անշուշտ նպատակը, գովելի բունն եռանդը, քայց աննպաստ  
էր ժամանակը, անընտելական միջոցները:

Յաջողութեց համաշխարհական պատերազմը, որ հարուածեց չարաչար ինչպէս  
համօրէն հայրութիւնն, նոյնպէս կաթողիկէ հայ ժողովուրդը. թեմերը ընաջնջուեցան  
ըստ մեծի մասին: Արիւնեցաւ Հովուապետին սիրտը, լացաւ անթիւ հովուակիցներու,  
որդոց եւ դստերաց կտտամահ կորուստը:

Ժամանակի պարագաներու տակ զգաց ինքզինքը ստիպուած յանձնել հօտն  
պատրիարքական փոխաւորդներու խնամքին եւ առանձնանալ Հոռոմ (1919) հեռուէն  
ցաւակից ըլլալու անհամեմատ աղէտին, որ ծանրացաւ հայ ժողովրդեան վրայ յետ  
պատերազմեան շրջանին:

Թէրգեանի կաթողիկոսութեան օրերէն երեք դէպք կը ցցուին մեր առջեւ,  
որոնք արժանի են յիշատակութեան: 1911—1912 տարւոյն Սիւնեոյն ի Հոռոմ,  
որ նպատակ ունէր հաստատել եւ սահմանել վարչական եւ հրահանգական կանոն-  
ներ կաթողիկէ հայ Նուիրապետութեան համար: Նոյն նպատակը կը հետապնդէր  
1928 տարւոյն խորհրդակցական ժողովը, ուր որոշուեցաւ նաեւ փոխադրել կաթո-  
ղիկոսական-պատրիարքական Աթոռը Կ. Պոլսէն Բէյրութ: Եւ երրորդ՝ երանաշնորհ  
Տէր Կոմիտաս Բեօմիւրձեանի երանացումն ի Հոռոմ (1929 Յունիս 23):

1929 ին միւսանգամ ձեռք առաւ Թէրգեան կաթողիկոսական-պատրիարքական  
գործերը. փոխադրուեցաւ Բէյրութ. քայց հագիւ երկու տարի վարած իւր առաքելա-  
ջան գործունէութիւնը, զգաց անբաւական իւր ոյժերը, եւ հրաժարեցաւ:

Թէրգեան իւր առանձնական կեանքին մէջ քերաւ երեւան քարի եւ սիրելի  
ընաւորութիւն մը, եւ իբրեւ այսպիսի վայելեց ընդարձակ շրջանի համակրութիւնը:  
Իր հոգեսէր, աստուածամերձ հոգին կը տենչար անդորրութիւն, զոր գնաց վայելելու  
ի Տէր:

Հանգիստ յաիտենական իր հոգւոյն ի լոյս մշտնջենաւոր:

Խոֆրագրութիւն «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ի:

# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԽԵ. ՏԱՐԻ 1931

## ԵՂԻՅԷ ՎԱՐԳՆՈՅՑ

ԵՒ ԻՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ԿՆՈՑ ՊԱՏԵՐԱՅԻՆ  
ԲՆԵՆԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՆ

(Շարունակութիւն):

26. ԹՈՒՐԲ-ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ  
ՆՇՄԱՐՆԵՐ ԵՂԻՅԷ ԲՈՎ

Թէպէտ Կայսեր եւ Սաքանի միջեւ  
կնքուեցաւ զինակցութիւն, բայց Թուրքերը  
չբերին զգալի մասնակցութիւն յաջորդ տա-  
րիներու հոռոմէական-պարսկական պատե-  
րապններու մէջ: Կ'երեւայ թէ բազմահարն  
Սուրով հաճած էր կերպով մը Մեծ Սա-  
քանի՝ Սինջիբուլի կամ անոր յաջորդին  
սիրտը: 573/74ին, երբ գրաւեց Սուրով Դարա  
բերդաքաղաքը, կը պատմէ Յովհ. Եփեսացի  
(2. 7) թէ քրիստոնէայ գերիներէն ընտրեց  
թագաւորը 2000 գեղեցկատեսիլ կոյսեր եւ  
հարսնագգեստ պճնած յանձնեց երկու մարդ-  
պանի, որպէս զի ամենայն զգուշութեամբ  
տանին հասցնեն «Թուրքերուն, որոնք (Պար-  
սից) երկրին խորքերը կը բնակէին», յուսա-  
լով այսու «հաճոյանալ անոնց, ուրախացնել  
յանոնք եւ յինքն յանկուցանել»: Թէպէտ  
կոյսերը ճանապարհին ինքնակամ գետամոյն  
եղան եւ այսպէս վրիպեցաւ Սուրով իւր  
ակնկալութենէն, բայց եւ այնպէս ցոյց կու  
տայ զրոյցս թէ Սուրով արդէն բարեկամա-  
կան յարաբերութեան մէջ է Թուրքերու հետ  
եւ չէր խնայեր միջոց աւելի ամբարտաւելու  
համար կայր:

Հոռոմէական-թրքական զինակցութիւնը  
անշուշտ այս շրջանի զիւանագիտական մեծ  
յաղթանակներէն մին պէտք է նկատել. եւ  
572ի հայկական աստատմութեան պարա-  
զլուինները հաշիւ ըրած էին անոր վրայ:  
Ուտի շատ անբարոնելի, միանգամայն զար-  
մանալի պիտի նկատուէր, եթէ լռէր Եղիշ  
այս մասին: Բայց չէր լռած պատմագիրը:

Եթէ այժմ սքողուած են իր տողերը, մեղա-  
ւորը Սմբագիրն է, որ Սկզբնագրին հազոր-  
դագրութիւնները աղաւաղած, կեղծած է եւ  
հատակոտոր, վայրավատին ցրուած: Ի մի  
հաւաքելով այս տեղիքներն եւ յեցած Մե-  
նանդրի հաւատարիմ տեղեկատուութեանց  
վրայ հնարաւոր է վերականգնել գոնէ ըստ  
մասնէ Սկզբնագրին միտքը: Փորձենք:

1. Հոն, ուր Ղազար կը պատմէր թէ  
վարդան Մամիկոնեան Սաղխաղի առջեւ  
խորտակելով Պարսից ոյժը յառաջացաւ  
Աղուանից աշխարհը, եղաւ միջամուխ մինչեւ  
ձորայ պահակը, նաեւ գրաւեց զայն եւ պա-  
հակին պահապան կարգեց աղուան վահանը,  
յանձնարարութեամբ որ բարեկամական յա-  
րաբերութիւններ մշակէ անիկա Հոներու  
հետ, կ'երեւայ թէ խմբագիրը գտած է նմա-  
նութիւն Եղիշի Սկզբնագրին մէկ հատու-  
ածին հետ եւ ի մի ձուլած երկու տեղեկա-  
տուութիւնները: Այս հատուածներն են.

Ղ. Փարպեցի, 66. Եղիշի, 59.

Եւ հասանէին ի պա- Եւ խաղացին գնացին  
հակ որմոյն, որ է ընդ այնուհետեւ ի վերայ պա-  
մէջ իշխանութեանն Աղու- հակին Հոնաց, գոր ու-  
անից եւ Հոնաց. եւ նէին բռնութեամբ պար-  
գտեալ անդ զպահապանս սիկէն. առնուին բանդէն  
պահակին եւ այլ զօրա- զպահակն, եւ կոտորէին  
կանս պարսիկս բագումս, զգօրսն, որ ի ներս բնա-  
յորոց սուր ի վերայ ե- կեալ էին. եւ գդուոնն  
դեալ կոտորէին. եւ զպա- տային ի ձեռն վահանայ,  
հակն յանձն առնէին քա- որ էր յազգէն քագաւո-  
գաւորագնի միում Աղու- րացն Աղուանից... Եւ  
անի, որում անուն էր անդէն ի նմին տեղուք  
վահան. եւ գնոյն արձա- զպրն՝ որում գդուոնն  
կէին զեսպան ի Հոնս եւ յանձն արարին, գնոյն  
առ այլ ամբական տե- զեսպանս արձակեցին յաշ-  
ղեացն, զորս հաւանե- յարին Հոնաց. եւ ի բա-  
ցուցէ միարանի նոցա գուլ յայլ ազգս բարբա-  
զնդաւ. որոց կամաւ եւ րոսաց, որ համազորք  
յօժարութեամբ զօգնելն էին Հոնաց աշխարհին,  
յանձն առեալ՝ հաստա- բանս զնիլ ընդ նոսա եւ  
տէին երգմամբ»:

կուսակցութեանը ունեւ զմիաբանութեանը: Իսկ նոքա իրրեւ զայն ամենայն լուսն, փութապէս վաղ-վաղակի հասանէին ի տեղին, եւ ականատեսք լինէին գործոյն յազմութեան: Եւ ոչինչ յապա-ղեցին երգմամբ յուստ մտանել ըստ կարգի իւրեանց օրինաց. յանձն առին եւ գերդաստն քրիստոնէից՝ պահել ընդ նոսա հաստատութեամբ զմիաբանութիւն:

Թէ խմբագրի ազգիւրը հոս Ղազար եղած է, չի կրնար կասկածի ենթարկուիլ: Բայց թէ ինչ շահագրգռութեամբ՝ շեղելով Ղազարէն՝ ճորայ պահակին ամբողջութեանը նախ քակել կու տայ Հայոց եւ ապա անոնց պահպանութիւնը յանձնել Վահանի, անբացատրելի է: Եթէ Պահակը անցած էր ուխտապահներու ձեռքը, բնականաբար կարող էին անոնք նաեւ առանց փնտելու ամբողջութեանը, ըստ հաճոյս բանալ եւ փակել անոնց դռները, բարեկամի կամ թշնամւոյ առջեւ: Բայց այս հակասութիւնն չէ որ կը հետաքրքրէ զմեզ: Եղիշէ կամ իր խմբագրիւրը առանձին չեղտով ստէպ ստէպ կը յեղեղէ հոս եւ այլուր Հոնաց հետ կնքուած Միաբանութիւն մը. «բանս զնել... ունել զմիաբանութիւնն» «յանձն առին եւ զերդունն քրիստոնէից՝ պահել ընդ նոսա հաստատութեամբ զմիաբանութիւն»:

2. Աւարայրի ճակատամարտէն ետքը (իմա՝ 574/75ի կռիւներուն) Արցախի լեռներուն վրայ սպաստանած Հայք «հանապազ յլէին յաշխարհն Հոնաց, շարժէին եւ յորդորէին զգունդն Հոնաց, եւ յիշեցուցանէին նոցա զուխտն՝ զոր եղեալ էր ընդ Հայս եւ անսուտ երգմամբ հաստատեալ: Հաճոյ լինէր բազմաց ի նոցանէ լսել զբանսն քաղցրութեամբ: Նաեւ մեղադիր եւս յոյժ լինէին նոցա, եթէ ի կոխու ընդէր ոչ եկիք պատ-րաստութեամբ: Եւ իբրեւ յառաջունն ինչ ոչ հնարէին զմիմեանս հաւանեցուցանել, ապա զունդ բազում գումարէին եւ անդէն յարձակեալ հասանէին (Հոնք) ի սահմանս տէրութեանն Պարսից. եւ զբազում գաւառս հարեալ, բազմադոյն եւս գերի առեալ տանէին յաշխարհն իւրեանց. եւ յայտնի ցու-

ցանէին թագաւորին զմիաբանութիւնն, գորունէին ընդ գնդին Հայոց» (99):

Հմմտ. նաեւ էջ 61. Վասակ կը լսէ զ«միաբանութիւնն եւս Հոնաց». 73. «զի սմենեւին արտաքուստ օգնական ոք ոչ զտաւ զնդին Հայոց, բայց յայնց Հոնաց, որոց բանս եղեալ էր». 100. «զորս աւերեալ էր գնդին Հոնաց վասն ուխտին Հայոց»:

Այս «միաբանութիւնը», որուն Եղիշէ ստէպ ստէպ կ'անդրադատնայ, Ղազարի քով անդամ մը միայն յիշատակութիւն գտած է: Մինչ Ղազար յայտնապէս յայն կոյս ճորայ պահակին բնակող Հոնքը կ'ակնարկէ, Եղիշէ ի քով խօսքը «Հոնաց աշխարհի» մասին է, որով ինքը Բուշանները կամ յայն կոյս Պարսկաստանի հիւսիս-արեւելեան սահմանին տէրութիւնը կ'իմանայ: Ինչպէս տեսանք 545—554 տարիներուն «Հոնաց աշխարհի» տէրերն էին Հելիթաղները. իսկ 554էն յետոյ Թուրքերը: Ուստի երկու ազգերը, որոնց մէջ կնքուած էր միաբանութիւնը ոչ թէ Հայք եւ Հոնք էին, այլ Հոսովայեցիք եւ Թուրքերը. այնպէս ինչպէս Մենանդը եւ Թէոփիլակոսոս կը պատմէին: Այս հայեցակէտով շատ պատշաճ է պատմագրին բացատրութեան ձեւը ժամանակին եւ հանգամանքներուն. «դեսպանս արձակեցին (Հոսովայեցիք) յաշխարհն Հոնաց (այս ինքն Պարսկաստանի հիւսիս-արեւելեան դրացի տէրութեան) եւ ի բազում յայլ ազգս բարբարոսաց, որ համագործ էին Հոնաց աշխարհին (այսինքն՝ այն թրքական ցեղերուն, կամ լաւ եւս՝ այն Թուրք անջատեալ տէրութիւններուն, որոնք Մեծ Սաքանի գերիշխանութեան տակ կը գտնուէին, ինչպէս Դիզարուլ եւ այլն), բանս զնել ընդ նոսա եւ ուխտ հաստատել անփակութեամբ ունել զմիաբանութիւնն. իսկ նոքա իրրեւ զայն ամենայն լուսն փութապէս վաղ-վաղակի հասանէին ի տեղին (Կ. Պոլիս), [եւ ականատեսք լինէին գործոյն յազմութեան?]. եւ ոչինչ յապաղեցին երդմամբ յուխտ մտանել ըստ կարգի իւրեանց օրինաց, յանձն առին եւ գերդաստն քրիստոնէից՝ պահել ընդ նոսա հաստատութեամբ զմիաբանութիւնն»:

Անշուշտ եթէ ունենայինք աչքի առաջ Սկզբնազիրը, աւելի մանրամասնութիւններ պիտի լսէինք Չեմարքոսի այս ղեկավար-գնացութեան մասին: Եղիշէ իւր տեղեկութիւններու էական մասը հաւանորէն բիւզան-

դական ազգիւրներէ գիտէր. 572/75ին, երբ կ'երթեւեկէին Երկուստեք ղեկավարութիւնները, կայսերական մայրաքաղաքի մէջ յաճախ խօսք կ'ըլլար այս միաբանութեան մասին. եւ ունէր Եղիշէ առիթ ակնշարժութիւնը ըլլալու հրապարակաւ եւ առտնին խօսակցութեանց: Իր բացատրութիւնը «ի բազում յայլ ազգս բարբարոսաց» յունական ազգիւր մը կը մասնանշէ<sup>1</sup>:

3. Ինձի կ'երեւայ թէ Եղիշէ խօսած էր այս առիթը նաեւ Չեմարքոսի վերադարձի մասին: Տեսանք վերադոյն թէ Հոսովայեական ղեկավարութիւնը վերադարձին բախեցաւ զԺուարութիւններու. Պարսիկները դարանամուտ էին անոնց կեանքին. կ'ուղէին ճանապարհին անհետացնել զանոնք: Եղիշէ խօսքերը Վասակի մասին, այս անգամ անկապ նախադասութեամբ մը, ակնարկութիւններ չեն այս հետապնդումներու շուրջ. կը գրէ Եղիշէ. «Սոյնպէս առնէր եւ ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տիւրիսն եւ ի Կորդիսն, յԱրցախս եւ յԱղուսանս, ի Վիրս, եւ յաշխարհն Խաղտեաց, յԷրպիսն, զի ասպնջակաւութեան ոք արժանի մի՛ արագէ» (Գ. 72): Որո՞ւն մասին է խօսքը. զո՞վ կը հետապնդէ Վասակ, որո՞ւն ասպնջակաւութիւն կ'արգելուի շնորհէ: Յամենայն դէպս հրամանը ուղղուած է այն կէտերուն, որոնք անցք ունէին դէպի Հոսովայեական սահման:

4. Իբրեւ յաջորդութիւն գէպերու՝ Մենանդրի տեղեկութեանց համաձայն կ'երեւայ Եղիշէի հարեւանցի յիշատակութիւնս. «Բանգի [առանց հրամանի ի գորացն Հայոց] յԱրեւելից կողմանէ աշխարհին յարձակեցան ուսմեք յԱտրպատական աշխարհն, եւ ի տեղիս տեղիս բազում վնաս արարին՝ առնելով եւ աւարելով եւ քանդելով գրազում աւարուշանս» (Գ. 53): Նախադասութիւնս կող է եւ անկապ նախորդ եւ հետեւորդ պարբերութիւններուն: Սկզբնազիրը փոփոխութիւն եւ համատարութիւն կրած է խմբագրէն, որ աչքի առջեւ ունեցած է հոս Ղազարի «ոս-

միկ գորացն բազմութիւնն ղիմեցին ի սուն մոխրանոցին, շլմալով բնաւ աւագացն հրամանի, եւ առեալ զկրակարանն վարեցին ի ջուրսն զկրակսն...» (63): «Ոմանք», որ «յԱրեւելից կողմանէ» յարձակում կը գործեն Պարսկաստանի վրայ, չէին կրնար «ի գորացն Հայոց» ըլլալ եւ ոչ ալ ենթարկուած անոնց հրամանին: Եղիշէ գրեթէ նոյն խօսքերով կը կրկնէ հոս, ինչ որ գրած էր Մենանդր. «Որովհետեւ Թուրքերը յարձակած էին Մարաստան եւ քանդած, աւերած եւ կոտորած աշխարհը<sup>2</sup>»: Մարաստան եւ Ատրպատական ըստ վերջին ղինուորական եւ քաղաքական բաժանման Հիւսիսային նահանգը կը կազմէին. եւ Մարաստան հասնելու համար Ատրպատական էր ճանապարհը: Հաւանորէն այս ասպատակող ժողովուրդեան մասին է Տարարիի ակնարկութիւնը (էջ 157—158). «Արխազ, Բանջար, Բալանջար (= Բուլգար) եւ Ալան կոչուած ժողովուրդները միաբանեցան ասպատակութիւն մը սփռել Խոսրովի երկիրը. յառաջ խաղացին դէպի Հայաստան աւարարելու անոր բնակիչները: Բանի անոնք հարթ եւ հանդիստ ճանապարհի վրայ էին, Խոսրով անտեսեց անոնց ըրածները. բայց երբ մտան իր երկիրը, հանեց անոնց վրայ բանակ մը, որ կոտեցաւ անոնց հետ եւ բնաջինջ ըրաւ. 10.000 հոգի միայն գերի բռնուեցան եւ Ատրպատական եւ դրացի երկիրներ փոխադրուեցան»:

Արշաւանդիս ժամանակը Մենանդրի համաձայն 571էն յառաջ, եւ 568էն ետքն է, ուստի մերձաւորապէս 570ին: Այս կը հաստատուի նաեւ Եղիշէէն, որ արշաւանդիս կից կը մեծ նորանշան աստղներու երեւումը, որ, ինչպէս պիտի տեսնենք, 571ին տեղի ունեցաւ: Նաեւ այն պարագան, որ Հոսովայեական-պարսկական պատերազմի ընթացքին ըստ Եղիշէի հայ-հոսովայեական բանակը կը մեղադրէ Թուրքերը, թէ «ի կոխն ընդէ՞ր ոչ եկիք պատրաստութեամբ» (99) ցոյց կու տայ, որ 572/73էն յառաջ ձեռնարկուած էր ասպատակութիւնս:

Տարբեր արշաւանք է, ինչ որ կը պատմէ Եղիշէ (99), թէ տեղի ունեցած է պատերազմի ընթացքին (574էն ետքը): Այս ասպատակախումբին պիտի պատահինք մենք յետոյ ճորայ գոններու առջեւ:

<sup>2</sup> Մենանդր, էջ 311. οἰδὲ γὰρ ἐσβάλλοντες ἐς τὴν Μηδικὴν τῆς τε γῆς ἕτερον:

<sup>1</sup> Եղիշէի մտենքն մէջ գեւ երկիցս կը գործածուի բարբարոս (βαρβάρως) բառը. «Իբրեւ ետես (Խոսրով) զբազմութիւն զնդին բարբարոսաց» (Ա. 11), կը ներփակուին նաեւ Հայք եւ Վիրք եւ այլ բրիտանեաց ազգեր. «Յոյնք երանի ետուն վասն նորա աշխարհին Հայոց, եւ յայտն բարբարոսք փութացան տեսանել զնա մարմնով» (Բ. 149), հասանումն բնակիչք Ատրպատանի, երկու անգամ ալ անձիւզ գործածութեամբ, հաւանորէն իմբարբէն:

27. «ԱՍՏԵՂԻ ԼՈՒՍԱԼԻՐ ՊԱՅԾՈՒԱՅԵԱԼԻ» ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՌՈՒԱՆ ՄԸ ՈՐՈՇՆԵԼՈՒ ԵՂԻՆՑԵՆ ԳԱՏՄԱԿԱՆ ՀՈՂԸ

Համոզուելու համար թէ ո՞ր, ո՞ր դարուն ունի Եղիշէ իւր պատմական հողը, բաւական էին արդէն այն ապացոյցները, որոնց հասանք պատմական համեմատութեամբ: Բայց չեմ կրնար անտեսել կարեւոր կուսան մ'ալ «լուսալիր պայծառացեալ», որ ունի իր մէջ ոյժը, կոյրին ալ տեսանելի ընկու գարը, ուր կը գործէ Եղիշէ:

Բռնազրօսիկ էին թերեւս մեկնութիւններս, երեւակայական թերեւս համեմատութիւններս, եւ անգոր վերջապէս ապացոյցներս պարսկա-հոփմէական, պարսկա-հեփթաղական եւ պարսկա-թրքական պատերազմներէն: Կարող են գտնուիլ մարդիկ, որոնք այսպէս դատեն: Բայց թէ նաեւ աստղաբաշխական ապացոյցիս առջեւ պիտի ուղեն յամառիլ անոնք իրենց կանխակալ կարծեաց վրայ, անհաւատալի պիտի երեւայ ինձ:

Թէ խմբագիրը Սկզբնագիրը շատ տեղ փոխած է, այլանդակած է, անճանաչելի դարձնելու չափ, ճարտարութեամբ կամ անճարակութեամբ, շատ անգամ շեշտեցինք վերագոյն: Այդ փոփոխութիւնները կարող էր ընել առանց մեծ աշխատութեան, անունները փոխելով, ետեւառաջութիւններով, յաւելուածներով եւ յապաւումներով. բայց չէր կրնար մեղցնել մատենագրին ոգին, որ աւերակներու տակէն ալ կը խօսի: Լսեցինք յաճախ անոր ձայնը: Առաջիկայ հատուածիս մէջ պիտի լսենք նոյնը միւսանգամ: Դարձեալ աւերակներու տակէն պիտի հնչէ ձայնը, բայց Եղիշէն է որ կը խօսի: Իմաստ ունին բառերը. եթէ խմբագիրը չէ կրցած ըմբռնել գանոնք եւ իւր գրչին տակ խեղդել, պէտք չէ որ նաեւ մենք բանաստեղծական, երեւակայական եւ կամ վիպական նկարագիր տալով անոնց, անունկնդիր մնանք:

Կը գրէ Եղիշէ: «Իսկ որ ի մեծամեծ ամուրսն անկանին, խաշանչան արարեալ ի վերայ դորուն յարձակէին. որ եւ երկու մեծամեծ բերդացն պարիսպն առանց ուրուք մերձեմալայ անկեալ կործանեցան. մինչեւ ամենայն բնակչաց երկրին գահի հարեալ ի մեծ նշանէն ինքեանք ինքեանց ձեռով գլխակատուսն այլ ին: ուրանալով գորէնս մոգուքեանն՝ խոս-

տովանէին ի սուրբ աւետարանն: — Եւ այլ մեծամեծ աջողութիւնք կատարէին ի ձեռն զօրականին. քանզի ուր ոչ էր ակնկալութիւն, երբ գանուն Աստուծոյ ոք յիշեցէ, արիւնք մեծ անկանէին ի վերայ նոցա. եւ ամենայն մարդ պատմէր ընկերի իւրում տեսիլս նորս եւ գարմանալիս: — Սոյնպէս եւ աստեղք ի յերկինս երեւէին յայժ լուսալիր պայծառացեալ, գոր ոչ ունէին յառաջին բնութեանն» (Գ. 53):

Բնագիրս, ինչպէս անկապ շարադրութիւնը ցոյց կու տայ, շատ խանգարուած է. բայց եւ այնպէս պարզ եւ մեկին է սողերուն միաքը, ուր խօսքը այն բնական, բայց հագուողէպ երեւոյթներու՝ երկրաչարժի եւ աստղաբաշխական տեսիլներու վրայ է, որոնք ինչպէս միշտ, նաեւ այս անգամ ազգած են մարդկան վրայ եւ սուրբ ընծայած սքանչանքի, երկիւղի եւ զղջման: Թէ Եղիշէ այս երեւոյթները իբրեւ աստուածացոյց նշան մ'ընդունած է՝ գուշակ բարեաց, եւ կամ իբրեւ աստուածասատ ցոյց մը ի յանդիմանութիւն շարաց, պիտի չհետաքրքրէ զմեզ: Մեզի համար այն է կարեւորն, որ պատմագիրն անձամբ ականատես եղած է լուսալիր աստղներուն եւ զգացած է երկրի ընդոտ ցնցումները:

Եւ որովհետեւ, ինչպէս բնական է, այս երեւոյթները միայն հայ հորիզոնին վրայ չեն նկատուած եւ ոչ ալ ցնցումները միայն հայ հողին վրայ զգացուած, կրնանք յուսալ վստահարար թէ անոնք նաեւ դրացի կամ հեռաւոր ժողովուրդներու քով արձագանգ տուած ըլլան: Օտար մատենագիրներու քով ալ վեր հանելով երեւոյթներուս յիշատակը, ոչ միայն անոնց որպիսութիւնը պիտի պարզուի մեր աչքերուն, այլ եւ պիտի ստուգուի ժամանակը, որ այնպէս կարեւոր է մանաւանդ ներկայ դէպքին մէջ:

Միքայէլ Ասորի, հաւանօրէն օգտուելով Յովհ. Եփեսացոյ Եկեղեցական պատմութեան այժմ կորսուած մասերէն, կը նկարագրէ իւր ժամանակագրութեան մէջ բաւական մանրամասնութեամբ Զ. դարու երկրորդ կէսին նշմարուած աստղաբաշխական երեւոյթներ, որոնց երեւման հետ տեղի ունեցած է նաեւ երկրաչարժ: Կը գրէ ասորի ժամանակագիրը<sup>1</sup>. «Յուստինիանոսի (Յուս-

<sup>1</sup> Chronique de Michel le Syrien, II, էջ 283—284, հրատ. Chabotի:

տինոս Բ.ի) առաջին տարին, որ է 878 տարին<sup>2</sup>, Թամուզ ամսոյն (Յուլիս) տեսնուեցաւ հիւսիսային կողմը մեծ լոյս մը, որ իբրեւ ահաւոր բոց մը կեցած էր բարձր օդի մէջ: Նոյն տարին տեսակ մը հրեղէն նիզակ երեւցաւ երկնքի վրայ՝ երկար ժամանակ: — Կայսրը Զմիւռնիայէն ամուր վայտէ մեծ մեքենայ մը բերել սուաւ, որուն վրայ քանի մը հողի կրակ առած կը թռչկոտէին, կ'ելլէին եւ կ'իջնային ըսելով. Կատարոմոս ըսուածն այս է: Այս դիւանական տեսարանին հանդիսատես ըլլալու համար մեծ բազմութիւն մը մարդկան հաւաքուած էր: Բայց զիշերը (զիւսաւորին) հուրը պատեց երկինքը հիւսիսային եւ արեւելեան կողմերէն: Ասկէ սարսափ մը տիրեց. որուն հետեւութեամբ հանդէսը երկու օրով յետաձուլեցաւ...: Նոյն հուրը նաեւ իջուլ եւ Թշրին (Սեպտ., Հոկտ.) ամիսներուն երեւցաւ երկնքի վրայ. կարծես թէ աւելի բորբոքած էր: — Առաջին Թշրինի (Հոկտ.) 5ին երկրաչարժ մեղաւ, որ երկիրը ծառի նման կը շարժէր: Նոյնը քանի մ'օր ետքն ալ կրկնուեցաւ: — Թշրին ամսոյն կ'իջնային դարձեալ երկնքէն կարծես օդի հրեղէն բռնկած ամուրներ. կը նմանէին եղէգի հրազատ խուլներու, կրակ առած թղթերու: Իբր երեք մաս երկար էին անոնք, այնպէս որ մարդիկ կողմէներով ժողովեցին տարին տուն: Այս հրաշքի պատճառաւ շատերը դարձան իրենց շար ընթացքէն»:

Հատուածներս ժամանակագրութեան հայերէն թարգմանութեան մէջ այսպէս աւանդուած է:

«Յառաջին ամին սորա (Յուստինոսի) երեւցաւ յօղզ հուր բորբոքեալ, եւ յոլովք ասէին թէ նշան արեան է: ... Դարձեալ երեւցաւ յարեւելս եւ ի հիւսիս(ի) այնպէս հուր՝ որ բազումք ի տեսնէն մեռան. եւ բերէր օդն եղէգն այրեցած եւ թողթ այրեցած, եւ բազումք ժողովեցին ի դամբիղս. եւ զարհուրեցաւ թագաւորն, եւ զնաց յեկեղեցին յաղաշանս, նոյնպէս եւ քաղաքն ամենայն: Եւ ի յինն ժամն աւուրն էլ ամպ մի հրախտն, եւ կայր ի նմա խաչ մի նկարեալ, եւ տեսեալ զայն բազմութիւնն աղաղակեցին. Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա ըստ մեծի

<sup>2</sup> Յուստինոս Բ., որուն մասին է հոս խօսքը, յաջորդած էր 565, Նոյեմբ. 13/14 զիշերը վախճանած Յուստինիանոսի (Stein, Studien, էջ 1): Հետեւարար ուղիղ չէ Միքայիլի ժամանակագրութեան տարին՝ Սեպտ. 878 = 566/67:

ողորմութեան քում: Եւ պատրիարքն ասաց յթագաւորն. Տեսանե՞ս զինչ եղեւ յաւուրս քո. որպէս յաւուրս մեծին Կոստանդիանոսի՝ նշան խաչի փայլատակեալ երեւեցաւ»<sup>3</sup> Եւն:

Նոյնը կը կրկնէ աւելի հակիրճ խօսքերով Գրիգոր Արուլֆարաջ<sup>4</sup>. «Յուստինոսի թագաւորութեան երրորդ տարին երկնքի վրայ երեւցաւ լոյս մը, որ հիւսիսային կողմը ամբողջ տարի մը շողաց. եւ օրուան ժամը իննէն մինչեւ գիշերը երկրի վրայ խաւար էր, այնպէս որ բան չէր տեսնուեր. եւ երկնքէն կ'իջնային շիղերու եւ մոխիրներու նման բաներ: Անոր (թագաւորութեան) երրորդ տարւոյն քիչ անձրեւ եկաւ. եւ ձմեռն ամառուան պէս էր: Մեծ երկրաչարժ եւ սատտիկ ճարակող ժանտախտ եղաւ: Անոր (թագաւորութեան) Դ. տարւոյն Սոսրով Դարան պաշարեց...»:

Այս մասին յիշատակութիւն մ'ալ կը գտնեմ Սամուէլ Անեցոյ ժամանակագրութեան մէջ, յամն 560 «խաւարեցաւ արեգակն ի կէսն Արեգի՝ մինչ ի Քաղոցն»<sup>5</sup>. Եւ յամն 567. «Աջ աստուածային երեւեցաւ ի սուրբ մատրանն. այլ եւ նշան ահեղ հրաշափայլ եւ արեւնատեսակ յերկինս»<sup>6</sup>:

Բիւզանդական տարեգիրները, որչափ ծանօթ է ինձ, խօսք չեն ըրած ոչ գիտաւորներուս եւ ոչ ալ երկրաչարժիս մասին: Բայց անոնց փոխարէն կան չինական տարեգիրները, որոնք աւանդած են մանրամասնութիւններ գիտաւորներուս երեւման եւ ընթացքի մասին: Այս տարեգիրներու համաձայն երեք գիտաւոր նկատուած է երկնակամարի վրայ Զ. դարու երկրորդ կէսին. ասոնք են<sup>7</sup>.

ա. 565 Յուլիս 14ին, արեւելքէն արեւմուտք ընթացքով:

<sup>3</sup> Տպ. 1871, էջ 258—259: Բ. խմբագրութիւնն ունի. «Յառաջին ամին սորա երեւեցաւ հուր բորբոքեալ յօղզ ի կողմն հիւսիսի այնպէս ահաղին, մինչ զի բազումք ի տեսնէն մեռան. եւ բերէր օդն քարակէղ այրեցած եւ ժողովեցին յոլովք ի դամբիղս, եւ զահի հարաւ երկիր: Եւ յինն ժամ աւուրն էլ ամբ միղախտն, եւ ի նմա խաչ մի կազմեալ ի լուսոյ»: ... Տպ. 1870, էջ 276:

<sup>4</sup> Des Gregorius Abulfaradsch kurze Geschichte der Dynastien. Aus dem Arabischen übersetzt von M. G. L. Bauer, Bd. I, Leipzig 1738, էջ 138—139:

<sup>5</sup> Արեգ-Քաղոց կը համապատասխանեն Փետր. 4 — Նոյեմբեր 7 ամիսներուն. այսչափ երկար արեգակնային խաւարում անհնար է մտածել. բնագիրը խանգարուած կ'երեւայ հոս:

<sup>6</sup> Սամ. Անեցի, էջ 75:  
<sup>7</sup> Հմտա. Camille Flammarion, Les étoiles et les curiosités du ciel. Paris 1882, էջ 729:

բ. 568 Օգոստոս 29ին, արեւմուտքէն արեւելք ընթացքով:

գ. 574 Ապրիլ 7ին, արեւմուտքէն արեւելք ընթացքով:

Երբորդ գիսաւորի երեւումը կ'երեւայ թէ չէ նկատուած Ասորիքի կամ Փոքր-Ասիոյ մէջ. բայց ճշգիւ կը համաձայնին 565ի եւ 568ի գիսաւորներու թուականները Միք. Ասորոյ տեղեկութիւններուն հետ: Յուստինոսի Ա. տարին, երբ տեսնուած է առաջին անգամ գիսաւորը՝ 565ն է: Թէեւ Յուստինոս նոյն տարւոյն Նոյեմբ. 14էն յետոյ դահ բարձրացաւ (Յուստինիանոս վախճանած էր Նոյեմբ. 13/14ի գիշերը), բայց, ինչպէս կ'երեւայ, Միքայէլ տարին յընդհանուրն միայն նկատի ունի: Չինական տարեգրիներու տեղեկութիւններուն համաձայն է նաեւ գիսաւորին երեւման ամիսը, Յուլիս (ճշգրտոյնս Յուլիս 14):

568ի գիսաւորի մասին ակնարկութիւն է անշուշտ «նոյն հուրը նաեւ Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսներուն երեւցաւ» խօսքը, առանց տարին նշանակելու. վասն զի չինական տարեգրիներն ալ նոյն միջոցին (ճշգիւ 29 Օգոստոս) կը նշանակեն երկրորդին երեւումը: Այսպէս գիտէ նաեւ Գրիգոր Արուսթարս, որ իւր ժամանակագրութեան հիմ կ'առնէ Յուստինոսի Գ. տարին (567/68):

Եղիշէի արտայայտութիւնը «աստեղք ի յերկինս երեւէին յոյժ լուսալիր պայծառացեալ», այսպէս յոգնակի ձեւով, կարող է երկու գիսաւորներն ալ ի միասին ընդգրկած ըլլալ. եթէ առ հասարակ այս գիսաւորներու մասին է իւր խօսքը: Վասն զի բացի 565 եւ 568 տարիներու գիսաւորներէն պատահած է աստղաբաշխական ուրիշ արտասովոր երեւոյթ մ'ալ, ոչ նուազ հետաքրքրաշարժ, որ թէ բնութեամբ եւ թէ ժամանակովը աւելի կը պատշաճի Եղիշէի նկարագրութեան եւ ժամանակագրութեան:

571 տարւոյն, Փետրուարի կէսին մինչեւ Մարտի կէսը պատահած է Արամազդ եւ Սատուռն մոլորակներու զուգադիպումը Կարիճ աստեղատան մէջ: Այս երկու հեռաւոր մոլորակները հանդիպած են իրարու եւ ամաւոր ժամանակով մին միւսին վրայ գիրք առնելով փայլատակած են երկնակամարի վրայ արտակարգ լուսով մը, «լուսալիր պայծառացեալ», զոր շուռէին «յառաջին բնութեան իւրեանց», ինչպէս իրաւամբ կը գրէ Եղիշէ:

Արամազդի եւ Սատուռնի այս զուգադիպումը մեկնած են Արաբացիք իրրեւ կանխագուշակ աստղ, աւետող Մահմեդի ծնունդը<sup>8</sup>, նմանութեամբ այն աստղին որ յայտնուեցաւ Քրիստոսի Ծննդեան ժամանակ:

Սոհայլի<sup>9</sup> կը գրէ. «Ուսողագէտները կ'ըսեն թէ Մահմեդի ծնունդը կ'իյնայ Նիսան ամսոյն (Ապրիլ) 20ին եւ Լուսնի կայարանի Ջաֆրին», այսինքն Ջաֆր աստղի լուսալիր վայրէջքին: Օյուն ալ-Աթար այս կարծիքը կը վերագրէ Աբու Բաքր Մահմեդ բ. Մուսա Սուվարիկին, որ ծաղկեցաւ Մամունի (813—833) օրով: Լուսնի Ջաֆր կայարանի նկատմամբ Վաթվաթ կ'ըսէ. «Ջաֆր այն երեք շատ փոքր աստղներու անունն է, որոնք կոր գիծ մը կը կազմեն: Աստղագէտները զանոնք Առիւծի սրունքի մէջտեղը կը դնեն: Մարգարէները Լուսնի այս կայարանի Նաւ (Naw) կը ըսուած լուսալիր վայրէջքին կը ծնանին, որ ասլրիլ ամսոյն կը պատահի»:

Տարարի այլ եւ այլ կարծիքներ ի մի ամփոփելով կը գրէ թէ Մահմեդի ծննդեան թուականն աւանդութեան համաձայն կ'իյնայ Սոսրով Անուշըրուանի թագաւորութեան Խ. կամ ԽԱ. տարին, եւ այն ճշգիւ առաջին փարի ամսոյն երկուշարթի օր մը: A. Sprenger<sup>10</sup> այս տեղեկութիւններէն մերձաւոր թուական մը ստանալու համար կ'ընտրէ 571 Ապրիլ 20:

Նորագոյն աստղագէտները հիմ առնելով Սովարիգմիլի յիշած աստղաբաշխական կուտանր Մահմեդի ծննդեան տարին կը նշանակեն 571 Փետրուարի կէսէն Մարտի կէսը, նկատելով որ ճիշդ այս միջոցին կը պատահի աստեղագիտական այն ցանցաւ երեւոյթներէն մին, որ անշուշտ իր տարօրինակութեան պատճառաւ զբաւած է տեղ ժամանակակիցներու յիշողութեան մէջ եւ աւանդաբար հարգուած յաջորդներուն:

Համաստեղութեան մէջ նկատուած այս հազուադէպ զուգադիպութիւնը եւ անոր հետեւութեամբ երկնակամարին պայծառու-

<sup>8</sup> F. K. Ginzel, Handbuch der mathematischen und technischen Chronologie, I. Band. Leipzig 1906, էջ 49:

<sup>9</sup> Մահմեդի ծննդեան տարւոյն եւ օրուան շուրջը արար հեղինակներու այլ եւ այլ կարծիքները համագրած է A. Sprenger, Über den Kalender der Araber vor Moh'ammad, ի թերթին Z. d. D. M. Gesellschaft, 13 (1859), էջ 134—175, յատկապէս 137—141:

<sup>10</sup> Հմմտ. A. Sprenger, Das Leben und die Lehre des Moh'ammad, I. Berlin 1861, էջ 138:

թիւնը բնականաբար պիտի արթնցնէր «արհաւիրք մեծ» ժամանակակիցներու վրայ, եւ հասկանալի է թէ «ամենայն մարդ պատմէր ընկերի իւրում տեսիլս նորս եւ զարմանալիս»: Այս նոր եւ զարմանալի տեսիլներու մէջ կարող էին նաեւ 565 եւ 568 տարիներու գիսաւորները ներփակուած ըլլալ:

Ինչպէս կ'երեւայ՝ ժողովրդեան առաջնորդները ի բարին մեկնեցին աստղաբաշխական այս երեւոյթը, խթանելու ժողովուրդը ոտք կանգնելու պարսիկ բռնաւորին դէմ եւ հասնելու ազգային անկախութեան պողպատեղի աստղին, որուն գուշակներն էին երկնակամարին լուսալիր կրկին աստղները:

Զուգաժամանակ տեղի ունեցած են երկրաշարժներ, որոնց ցնցումովը «երկու մեծամեծ բերդացն պարիսպքն առանց ուրուք մերձենալոյ անկեալ կործանեցան»: Դժուար է ստուգել թէ ի՞նչ ուղղութեամբ ընթացած են շարժին ալիքները. եւ ո՞ւր մասնաւորապէս ուժեղ եղած է ցնցումը, կամ ի՞նչ բերդեր էին անոնք, որոնց պարիսպներու տապալումը կը յիշուի: Տեսանք վերագոյն թէ Միքայէլ Ասորոյն ալ ծանօթ է այս շրջանէն երկրաշարժ մը. աստղաբաշխական եւ օդերեւութարանական եւ շարժադիտական դէպքերու խճողումը մէկ տարւոյ մէջ հնարաւորութիւն չի տար գտնելու ուղի ժամանակագրութիւնը: Բայց եւ այնպէս երկնքէն թօթափած հրախառն ամխացած իրերը, որոնք հաւանօրէն ուժեղ երկրաշարժի մը, թերեւս նաեւ հրաբուխի մը ժայթքման արդիւնքներն էին, կրնային նիւթն եղած ըլլալ այն «նոր զարմանալի տեսիլներու», որոնց մասին խօսած են ժամանակակից մարդիկ զարմանքով եւ երկիւղով:

Երկրաշարժիս ժամանակը ստուգելու համար յանակնկալս օգնութեան կը հասնին արար մատենագիրները՝ Իբն Մայիդ, Իբն Ասաքիր եւ Տարարի, որոնց համեմատ տեղի ունեցած է այն 571ին. կը գրեն<sup>11</sup>. «Մարգարէին (Մահմեդի) ծննդեան գիշերը ցնցուեցաւ զողաց Սոսրովի զարպասը եւ կործանեցան ինկան տանն եւ չորս քանդակազարդեր (շորֆա). մարեցաւ մողերու կրակը, որ հարգար տարի է ի վեր անչէջ մնացած էր. ցամաքեցաւ նաեւ Սաւա լիճը<sup>12</sup>»: Թէպէտ արա-

<sup>11</sup> A. Sprenger, Das Leben und die Lehre des Moh'ammad, I, էջ 134—136:  
<sup>12</sup> Սաւա կը գտնուի ընդ մէջ Համադանի եւ

բացիք երկրաշարժս իրրեւ կանխագուշակ նշան մը կը ներկայացնեն, այն իմաստով թէ 14 քանդակազարդերու կործանումը պարսկական պետութեան 570—652 տարիներու նոյն թուով թագաւոր-թագուհիներու զաղափարական օրինակներն են, որոնց մահուանէն ետքը իշխանութիւնը Մահմեդի յաջորդներու ձեռքը պիտի անցնի, բայց այս անագանազոյն շրջանի մեկնութիւն մըն է: Երկրաշարժ մը, որ ի Տիգրոն արքունի զարպասը ցնցած է եւ Սաւա լիճը ցամաքեցուցած եւ նուիրական Կրակն մարած (Ատրպատական), իմանալի կ'ընէ Եղիշէի խօսքերը «ինքեանք ինքեանց ձեռօք զկրակատունս այրէին»:

Այսպէս կ'ունենանք ժամանակագրական սքանչելի կուտան մը, որ ճշգիւ կը համաձայնի նախորդ եւ հետեւորդ դէպքերուն եւ կը փարատէ ամէն կասկած նկատմամբ այն եղբակացութիւններու, որոնց յանգեցանք նախորդ գլուխներու մէջ համեմատական-պատմական ուսումնասիրութեամբ:

Ըստ այսմ «Հայոց պատերազմի» նախընթաց շրջանը, զոր նկարագրած էր Յովհ. Եփեսացի, կը գտնէ նաեւ Եղիշէի քով յիշատակութիւն, թէպէտ ազօտ գծերով. Սոսրովի հրամանը Դունոյ մէջ Կրակատուն մը շինելու, Հայոց զիմազրութիւնը, այս աստիճանական թիւ բանակցութիւնները հրամատարին եւ արքունիքին հետ, եւ վերջապէս ապստամբական շարժման իմոքումը, 571 տարուան դէպքերն են: Ապստամբութեան ազդանշանը արուեստաւ 572, Փետր. 2ին, երբ սպանուեցաւ Սուրէն<sup>13</sup>: Այս մասին յետոյ առանձին:

(Շարտանակելի): Ն. Ն. ԱՆՈՆԾԱՆ



Իսպի. G. le Strange, The Lands of the Eastern Caliphate, Cambridge 1905, էջ 210—211:  
<sup>13</sup> Հմմտ. Հանդ. Ա. մ. ս. 1913, էջ 79: